

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

„Անսանձի սանձահարումը“ Շէքսպիրի. — „Կախարդական աշխարհ“ Պոտպենկօի. — Մօննա-Վաննա՝ Մէտէռլինկի. — Հասարակական, ամբոխային և անհատական էզօիզմ. — Իֆիգենիա և Մօննա-Վաննա. — Մարդկային բնութեանը համապատասխան և իդէալական ճշմարտութիւն. — Կեղծիքը կեանքի մէջ. — Մեծ և փոքր անարդարութիւններ. — Անհատական մանր էզօիզմը որպէս հիմունք մեծ շարիքի

Անցեալ նոյեմբերի 25-ին հայոց դրամատիկական ընկերութեան խումբը ներկայացրեց Շէքսպիրի «Անսանձի սանձահարումը» Այս պիեսան Շէքսպիրի ամենաթոյլ գործերից մէկն է և դեռ յայտնի էլ չէ, թէ նրա հանձարեղ արտադրութիւնն է այս արդեօ՞ թխուած հսկայ երևակայութեան ձանձրոյթի մի ժամին, թէ՞ մի այլ խորթ ձեռք է գրել և կապել այն Համլէտի հեղինակի մեծ անուանը Այդ պիեսը առանձին հետաքրքրութիւն չի ներկայացնում և եթէ շարունակում է մնալ թատերական ընկերութեան մէջ, այդ երևի այն պատճառով, որ Շէքսպիրի անունն է կրում վրանս

Հիմնական գաղափարը լրջութիւն չի ներկայացնում, նոյն իսկ բանալ է. դա մի փորձնական դաս է, թէ ինչ միջոցների պիտի դիմի մի տղամարդ իր «անսանձ» կնոջը «սանձահարելու» համար Մի թեմայ, որի համար չարժէ ? — 4 ժամ նստել և աչքերը բեմին սեւեռել: Միակ հետաքրքրութիւնը, որ կարող էր ներկայացնել այդ պիեսը, դա դիալոգների ժամանակ յաջող ընտրած դուարձալի ընկերակցներն են, որ պէտք էր թափել կարկուտի պէս սրամտօրէն, բայց տարաբաղաբար և՛ մեր դերասանների բաւական դանդաղաշարժ լեզուն և՛ մանաւանդ ձանձաղ թարգմանութիւնը շատ անբարեպատեհ հանգամանքներ էին պիեսի այդ մասը լաւ կատարելու համար Ահա թէ ինչու մենք այդ պիեսան համարեա ծայրէ ի ծայր լսեցինք ձանձրոյթով, ինչպէս և հան-

գիտականների մեծամասնութիւնը, որոնց թիւը, ի դէպ է ասել, այդ օրը շատ քիչ էր:

Դեկտեմբերի 2-ին իր բենեֆիտի համար տիկին Մայսուրեան ընտրել էր Պօտապենկօի «Դիւթական-հէքիաթ» պիեսան:

Պօտապենկօն պատկանում է ուսու տենդենցիօյ գրողների այն դասակարգին, որոնց սրատես հայեացքը անընդհատ փորփորում է հասարակական կեանքի զանազան խաւերը ոչ այնքան զուտ գեղարուեստական երկերի թեմաներ գտնելու, որքան անխնայ կերպով հարուածելու և ուսուցանելու մի դատաւորի, մի ուսուցչի համարձակութեամբ: Պօտապենկօն իր ողջախոհ և ուսուցանող ձգտումների մէջ մի տենդոտ եռանդ ունի, որ նրան կարծես դադար ու հանգիստ չի տալիս. թւում է, թէ նրա համակրելի տաղանդն այնքան շատ է տեսնում իր շուրջը մռայլ, վիատեցուցիչ երեւոյթներ, որ նա այլ եւս գրական—հասարակական տեսակէտից մէկին միւսին առաւելութիւն տալու լու ընտրութիւն անելու ժամանակ չունի: Փոքեէ մեղաւորը իրականութիւնը, խեղդող միջավայրն է, ուր զարգացել է, գործում է այդ համակրելի տաղանդը:

Նրա «Դիւթական հէքիաթ» պիեսան նեղհայեաց մօմենտի արդիւնք է. նրա մէջ պակասում են գրողի այն լայն ժեստերը, որոնցով հնարաւոր է գտնում ցնցող ամբողջութիւններ ընդգրկել և հասարակական խոշոր վերքեր շօշափել: Նիւթն աւելի քան պարզ է. Համեստ ծագումից աղջիկ Նատալիան, ով գիտէ ինչ գիպուածով ընկնում է արիստոկրատներին յատկացրած ինստիտուտը, ուր ընականապէս ստանում է մի այնպիսի դաստիարակութիւն, որ նրան կտրում է իր սեփական միջավայրից: Վերադառնալով հայրենի տուն, նա չի կարողանում հաշտուել իր նոր կացութեան հետ, աշխատել չի ուզում, իր մեծացած պահանջներին բաւականութիւն տալ չի կարողանում, ի վերջոյ թողնում է և գնում իր մի նախկին ծանօթ երիտասարդ կոմս Իփոքսիու մօտ և կենակցում նրա հետ: Նոր միջավայրում նա նոյնպէս դժբաղդ է, որովհետեւ նրան շարունակ զգալ են տալիս իր համեստ ծագումը: Վերջ ի վերջոյ նա թողնում, հեռանում է և՛ այստեղից սեփական աշխատանքով ապրելու համար: Կարելի է ասել, որ սա գիպուածների գուցէ և բացառիկ գիպուածների մի պիեսայ է. Նատալիան գիպուածով է ընկնում ինստիտուտ, գիպուածով է ծանօթութիւն կապում մի հարուստ կոմսի հետ և համարեա գիպուածով է սկսում նրա հետ իր կենակցութիւնը: Եւ այս բոլոր գիպուածների նրա համար, որ Պօտապենկօն հանի մի ողորմելի մօրալ—աշխատանքի անհրա-

ժեշտութիւնը: Այդպիսի գրաման, որ սինտեզ չէ հազարների հոգին ալեկոծող զգայմունքների, հազիւ կարողանայ որեւէ կրթիչ դեր խաղալ: Նրա յարուցած հետաքրքրութիւնը հետոս չի լինի լրագրական faits diversés-ների զարթեցրած հետաքրքրութիւնից:

Դերակատարները լաւ էին. հասարակութիւնը վարձատրեց աս. Մայսուրեանին ծաղիկներով, ընծաներով և կրկնակի ծափահարութիւններով:

Հաուսպամանի «Սորասուզուած զանգից» յետոյ Մէտէոլինկի «Մօնա-Վաննան» որ խաղացուեց ղեկտեմբերի 9-ին, կարելի է ասել՝ երկրորդ գրաման է, որ այս թատրոնական սեզոնում արտակարգ նորութիւն եղաւ թիֆլիսում: Միանգամայն գովելի ընտրութիւն. երբ դասական գործեր խաղալու դժուարութիւն կայ, շատ աւելի լաւ է ներկայայնել այնպիսի ժամանակակից գործեր, որոնք անհանգստութիւններով պաշարուած մարդկային հոգուն որոճալու նիւթ են տալիս, մտքի առաջ լայն հորիզոններ են բաց անում և մեր անզիտակից «ես»ին ստիպում են երկուտակ ծալուել իր ներքին խաւար անդունդը սարսափած հայեացքով չափելու համար: Մարդկային հոգին նոյնքան գազտնիքներ ու տակաւին անհասկանալի պրօբլեմներ ունի, որքան մայր բնութիւնը. կամաց-կամաց յետ քաշել այդ զարհուրելի միտերը պատող քօղը, «ես»-ի եւ ռոչ—ես»-ի յարաբերութիւնը պարզել, արտաքին աշխարհի և մարդու ներքինի կապերը աւելի պարզ և որոշ դարձնել, վաղուց հետէ մեծագոյն մտածողների մշտական խոհերի առարկան է եղել, եւ այդ ասպարիզում մտքի տարած ամենափոքր յաղթութիւնը բնութիւնը ծածկող միտերի մի նոր պարտութիւնն է: Շատերից յետոյ այժմ Մէտէոլինկն է գալիս մեր գազտնիքների աշխարհը յուզելու: Բելգիացի հռչակաւոր գրողը, որ մի ֆրանսիական միտք է, շատ տեսակէտով արժանի է առանձին ուսումնասիրութեան, որ գուցէ անպատեհ լինի այս տեսութեան մէջ, թողնելով մի այլ, աւելի յարմարաւոր աւթի, ղեկադենտների այս շեֆի ամբողջ բարոյական պատկերի զծագրութիւնը, այս անգամ կը զբաղուենք միայն նրա Մօնա-Վաննայով:

Մէտէոլինկ իր այս նոր պիեսայի համար նայել է պատմութիւնը մի քանի դար մեզանից առաջ և իջել է հարաւ՝ յոյզերով, կրքերով ու անգթութիւններով հարուստ երկիրը՝ Իտալիա: Դժուար էր աւելի յարմար միջավայր և աւելի պատշաճ պատմական մօմենտ ընտրել ասելու համար այն՝ ինչ ասել է Մէտէոլինկ, Իտալական երկու փոքրիկ հանրապետութիւններ՝

Յլօրենցիան և Պիզան արիւնահեղ կռուով են բռնուած. մէկն այն անթիւ կռիւններից, որոնք միջին դարերում աներեցին Իտալիան և որոնց ընթացքում հարաւի այդ տաք, բորբոքուող ժողովուրդը արեան և մուխ ոճիբների զարմանալի օրինակներ տուեց աշխարհին:

Պիզան ընկճուած է. պաշարուած և ստիատանջ քաղաքի բնակիչները յետին ծայր յուսահատութեան մէջ են. թշնամի բանակի առաջնորդ Պրինչիվալլէ պատրաստուած է վերջին հարուածը—քաղաքի աներածն ու բնակիչների ջնջումը դարձել է անխուսափելի: Պրինչիվալլէին մեղմացնելու բոլոր փորձերը մնացել են անօգուտ: Պիզան պաշտպանող բանակի զօրապետ Գուեիզօն լսում է իր բնակարանի դրան առաջ խմբուած բազմութեան հայ, հայ, աղաղակները և ծայրայեղ հոգեկան խռովութեան մէջ ինչ անելը չը գիտէ. որպէս վերջին յոյս, նա սպասում է իր ծերունի հօր՝ Մարկօի վերադարձին, որ գնացել է Պրինչիվալլէի մօտ նրա խստասրտութիւնը մեղմելու: Նա գալիս եւ բերում է Պիզայի փրկութեան ակտիսը, Պրինչիվալլէն համաձայն է ոչ միայն խնայել Պիզան, այլ և ուղարկել հարիւրաւոր սայլերով պաշար, արջարների և ոչխարների հօտեր, ռազմամթերիներ Յլօրենցիայի դէմ կռիւը շարունակելու համար, և այս բոլորը մի հատիկ պայմանով, որ Գուեիզօն համաձայնի իր գեղեցիկ կնոջը՝ Մօննա-Վաննային մերկ, միայն մի հատիկ ծածկոյթով, ուղարկել Պրինչիվալլէի մօտ, նրա վրանում անյուկայնելու մի գիշեր:

Գուեիզօն կատաղած այս անսպասելի առաջարկութիւնից լսել անգամ չի ուզում իր հօր յորդորները, մինչդեռ Մօննա-Վաննան իրազեկ եղած, ընդունում է ծանր ու անարգ զոհարբութիւնը իսէր տառապող ժողովրդի, և հայրենի քաղաքի փրկութեան համար: Եւ նա թողնելով իր ամուսնուն ջարդուած ու յուսահատ, ճանապարհ է ընկնում գէպի Պրինչիվալլէի բանակը: Տեսակցութիւնը, որ տեղի է ունենում Մօննա-Վաննայի եւ Պրինչիվալլէի մէջ վերջինի վրանում, առաջ է բերում մի անսպասելի հետևանք. անողոք ու բիրտ թշնամի զօրականը ընկճուած զոհի մեծութիւնից՝ յայտնում է, որ ինքը դեռ մանկութիւնից սիրում է Մօննա-Վաննային: Այդ սէրը նրա մէջ այնքան մեծ է և այնքան մաքուր, որ նա՝ այն սարսափելի Պրինչիվալլէն, խոնարհուում է Մօննա-Վաննայի առաջ, պատրաստ է իր խոստումը կատարել Պիզայի փրկութեան համար և արձակել նրան նոյնպէս անբիծ ու անարատ, որպէս եկել էր: Մօննա-Վաննան իր կողմից՝ հիացած է այս մեծահոգութեան վրայ եւ Յլօրենցիայի հաստատ վրէժինդութիւնից Պրինչիվալլէին ազա-

տելու համար, առաջարկում է նրան իր հետ փախչել Պիզա, ուր նա նրա հովանաւորողը և պաշտպան ոգին կը դառնայ: Սայլերը պաշարով հասնում են Պիզա և նրանց յետեից յայտնւում են Մօննա-Վաննան և Պրինչիվալլէն: Ժողովուրդը ցնծութեան աղաղակներով է ընդունում Մօննա-Վաննային, որպէս իր փրկչին, բայց Գուիզօն նրան տեսնել չի ուզում, վիրաւորւած արուի բոլոր կատաղութիւնը թափում է նրա գլխին: Նա չի ուզում հաւատալ Մօննա-Վաննային թէ Պրինչիվալլէն նրան անբիծ է արձակել, և մխիթարւում է միայն նրանով, որ իր կատաղի թշնամի Պրինչիվալլէն, գոնէ իր ձեռքումն է, որից վրէժխնդիր կը լինի իր այրուած սիրտը հովացնելու համար: Մօննա-Վաննան ամուսնու այս թերահաւատութեան հանդէպ և Պրինչիվալլէին փրկելու համար դիմում է մի ծայրայեղ միջոցի, նա կեղծում է, նա հաւատացնում է որ Պրինչիվալլէն նրան վիրաւորել է ամենաանարգ կերպով և պահանջում է իրան յանձնել այդ թշնամուն վրէժխնդիր լինելու համար: Պրինչիվալլէի բանտի բանալիքները նա իր մօտ կը պահի և գիշերով կը փախցնի կամ կը փախչի նրա հետ:

Մենք տեսել էինք զրամաններ, ուր անհատի էութիւնը երկճիւղ է դարձած, ուր մարդկային բնութեան երկուութիւնը դէմ առ դէմ կանգնած իբրև երկու հակառակորդներ կրճտուում, բրբբում են իրար, արևնոտելով տառապող հոգին, ուր մարդն ինքն է իր փրկութեան նոխաղը և գերադոյն զոհաբերը: Դրամաներ, ուր հոգու ներքին պայքարը, մութ ալեկոծումները իրանց յուզիչ յեղեղումներով մարդկային ձակատաղիքը դարձնում են այնքան արգահատելի և կրած տառապանքները այնպէս ցնցող: Այժմ Մէտէոլինկը իր Մօննա-Վաննայով անհատական հոգիների զրամաններից հիւսել է մի մեծը, աւելի լայնը, ուր ընդհարում են անհատական և հասարակական, ամբոխի և մի հատ մարդի էգօիզմը և այնպիսի բացառիկ պայմաններում, որ երկուսն էլ սրուած են ծայրայեղ աստիճանի, երկուսն էլ ազատօրէն փուում են իրանց էութիւնը բնորոշող, իրանց հիմքերն կազմող յատկանիշներով: Պիզան քաղցած է, Պիզան աստապում է, հաղարաւոր բերաններ հաց են ոռնում, կենդանական ինստինկտը խօսում է անողբ, հրամայող շեշտով, գլուխներ չը կան, խօսողն ստամոքսն է, մարդիկ ապրել են ուզում և գոյութեան սպառնացող ծայրայեղ վտանգի առաջ կենդանին ըմբոստանում, ցնցւում է և ապրելու, չնչելու պահանջը մեծանում, բռնում է նրա բոլոր էութիւնը և նա պատրաստ է ընթացիկ բարոյականութեան, տիրող բարոյական հասկացողութիւնների վրայ քայ-

լել, նա պտտրաստ է անմեղներ դնել իր ոտքի տակ, բարձրա-  
նալ, միայն թէ կարողանայ փրկել իր գոյութիւնը...

Եւ ինչո՞ւ այդ բոլոր զոհերը, ինչո՞ւ ապրել այդքան թանկ  
գնով, ուր է այս գոյութեան խորհուրդը, ուր է տանում մեզ  
բնութիւնը, այդ ո՞վ կարող է իմանալ, ի՞նչպէս իմանալ, միս-  
տերներին միստերն է այն, ինչ որ յայտնի է, այդ այն է, որ  
պէտք է ապրել ինչ գնով և լինի, այդպէս է դատում ամբոխի  
էզօրիզմը, կոյր բնութեան մէջ մարդը գերագոյն լսարկափողն է,  
ողորմելի կոյրը, որ չափել չի կարող յաւիտենականութեան  
անդունդները, և սակայն պիտի տքնի, տառապի, և քաշ տայ  
իւր ողորմելի գոյութիւնը դէպի մութ անյայտը, էզօրիզմը իր  
ծայրայեղ արտայայտութիւնների մէջ անհատի մօտ անգամ  
սարսափելի է, բայց երբ առանձին առանձին իղձերից ծեփ-  
ւում է հասարակականը, ամբոխայինը, երբ բնութիւնը գալիս է  
մղումն տալու նրան իր հրամայող պահանջներով—այն ժամա-  
նակ նա դառնում է տարերային, աւերիչ, ահաւոր, Այսպէս է  
ամբոխների էզօրիզմը՝ որ արտայայտուել է պատմութեան ամե-  
նատրագիկ մօմենտներում, այսպէս է և այն ամբոխային էզօրիզ-  
մը, որի մտայլ պատկերը տալիս է մեզ Մէտէոլինկը հոգեբանա-  
կան ապրկեցուցիչ նրբութեամբ:

Այս հսկայ, ամբոխային էզօրիզմի հանդէպ կանգնած է մի  
մարդ՝ Գուիգօն, որի վրայ ընկնում է զոհի բոլոր ծանրութիւնը,  
որի մէջքը չի դիմանում այդ ահագին բռնին, որ ծառանում է  
փրփրած երկվարի պէս և զիջել, հնազանդուել չի կամենում:  
Նա էլ մէկն է այդ զոհ պահանջող բազմութիւնից, մէկն է  
բնութեան անհասկանալի խաղալիքներից և սիրով յանձն կ'առ-  
նէր ուղարկել Պրինչիվալէին մի կին, մի կոյս, միայն թէ դա իր  
կլինը, իր աղջիկը չը լինէր: Բայց ինչո՞ւ անպատճառ Վաննան,  
եթէ նա (Պրինչիվալէն) ունի այդպիսի մի բաղձաւք... Մթթ է քիչ  
կլին կայ դրա համար... Բացականչում է Գուիգօն կատաղած:  
Եւ ինչո՞ւ անպատճառ իմը, սա մի վերին աստիճանի հետաքրքիր  
և անհատական էզօրիզմը բնորոշող հարց է, որ այս խելակորոյս  
բազմութիւնից ամեն մէկը կարող էր կրկնել, իւրաքանչիւրը  
կարող էր ասել մնացածների երեսին, եթէ զոհի ծանրութիւնը  
իւր վրայ ընկնէր: Ամբոխը ուրիշ պատասխան չունի այս հար-  
ցին բացի այն, որ Պրինչիվալէն, զոհ պահանջող այս լեզուդա-  
կան վիշապը, նրա կիներն է ուզում և ոչ մի ուրիշինը: Այստեղ  
են ընդհարում երկու էզօրիզմները, ամբոխայինը և անհատա-  
կանը, այստեղ է դրամայի բոլոր ցնցող մեծութիւնը: Յաղթա-  
նակն անկասկածելի է, մէկը հաղարների դէմ է և այն կատա-  
ղած, կենդանական կարիքներից անասնայած հաղարների: Հին

աշխարհը մի հրաշալի 'ամուշ ունի այսպիսի հսկայական, ցնցող պաշարի, դա Իֆիգենիայի զոհուելն է Տրոյադա արշաւող յոյն բանակի պահանջով: Աղամեմնոնը՝ հայրն է, նա հեշտութեամբ չի զիջում: մայրը մինչև վերջին վայրկեան դիմադրում է, Աքիլլէսը այս յունական Գուրգոն, լսել չի ուզում իր նշանածի, Իֆիգենիայի զոհուելու մասին, բայց այնտեղ ծովի պէս ալեկոծուող ամբողջ կայ, որ իր իրաւունքները հիմնում է երկնքի անմխտելի օրէնքների վրայ: Ամբոխի և անհասաների մէջ առաջ եկած ընդհարումը լուծուում է այնտեղ աստուածների, գերբնականի միջամտութեամբ: Նոր աշխարհը գերբնականը չունի այլ ևս, լուծումը մարդկային պիտի լինի, և հին աստուածների դերը Մէտէոլինկի զրամայի մէջ կատարում է ինքը զոհը, Մօնա-Վաննան, զրամայի հերոսուհին:

Սա բոլոր տիպերից ամենամտածուածն է, հոգեբանական խորին և ճշգրիտ տրամաբանութեան վարպետ հետեւողակա-նութեամբ: Մօնա-Վաննան կարող է չը գնալ, նա բազմաթիւ հնարներ ունի խուսափել գերագոյն զոհարելութիւնից, նա կարիք չունի Իֆիգենիայի պէս աստուածների ձեռքով երկինք բարձրանալու, բայց նա գնում է կամաւ, նա յանձն է առնում պահանջուած զոհը և ըստ երեւոյթին վերջ է տալիս անհատի և ամբոխի զարհուրելի մենամարտին: Նա Գուրգոի կինն է, բայց և մարդ է, և իբրև այգպիսին, ազատ է զգում իրան հայրենի քաղաքի սիրուն, տառապող մարդկութեան սիրուն զոհ բերել գերագոյնը իր սեփականութիւնից, իր կանացիութիւնը, իր պատիւը, որովհետև չը կայ աշխարհում այնպիսի թանկ բան, որ անկարելի լինէր զոհել մի հատիկ մարդկային կեանք փրկելու համար: «Ժողովրդի կեանքը այդ բաներից բարձր է իմ աչքում», ասում է Վաննան Պրինչիվալլէին: Աշխարհում բազմաթիւ են օրինակներ, երբ մարդ զոհ է բերում իր կեանքը իր նմանին փրկելու համար, և այդ զոհը համարուել է գերագոյնը զոհերից: Եւ սակայն կեանքից թանկ բան էլ կայ աշխարհում. որովհետև որքան անգամ մարդիկ մեռնում են անբիծ պահելու համար պատիւը, խնայելու համար ամօթը: Մէտէոլինկը յանձին Մօնա-Վաննայի տալիս է մեզ մի սարսափելի զոհարելութեան օրինակ, երբ անհատը յանձն է առնում իր նմանի սիրուն զոհել կեանքից էլ թանկ բանը:

Ծայրագոյն զոհաբերութիւնը անհասանդիր և անգառնալի, նաև իր ծայրագոյն յաղթանակն ունի: Մօնա-Վաննան ընկճում է Պրինչիվալլէին իր հմայքով, ինչպէս հէքիաթների մէջ առեւի դեւին ստրկացնող կոյսերը, և հայրենի քաղաքի զոհութեան և ցոծութեան աղաղակների մէջ նա տեսնում է

իր վսեմ վառքը ձեռք բերած անօրինակ պատրաստակամութեան գնով, Պրինչիվալլէի վրանի դոնից սրպիսի հաճուցող և հպարտութեամբ ջոյց է տալիս նա հեռուում երեւացող տեսարանը, որ իր պատրաստածն է. Վերլոր աշտարակները լուսավառուած են և պատասխանում են աստղերին: Փողոցները լուսոյ շաւիղներ են ձգում երկնքում. ես որչափ եմ նրանց հետքերը, ես աչքով անցնում եմ նրանց վրայով երկնքում ինչպէս այս առաւօտ անցնում էի նրանց սալալատակի վրայով... Անա Պիացցան (հրապարակը) և իր գմբէթը բոյազաւ և Կամպօ Սանտօն, որ ներկայանում է ստուերի մի կղզի. Կարծէք թէ կեանքը, որ թւում էր կորած, յետ է գալիս հապճեպով, ճառագայթում է սլաքների ծայրերին, շողշողում է քարերի վրայ, հուր է թափուում պարիսպների վրայից, հեղեղում է դաշար, գալիս է մեր հանդէպ և մեզ էլ կանչում է... ականջ դիր... Միթէ չես լսում, այնպիսի բուռն և յախուռն ազազակներ են բարձրացնում կարծես թէ ծովը հեղեղած լինի Պիզան. միթէ չես լսում զանգերի ձայնը, որոնք գեղեցիկում են այնպէս, ինչպէս հարսանիքիս օրը... Օ՛հ, ես անչափ երջանիկ եմ և կրկնակի ու գերիվեր երջանիկ, տեսնելով այս բախտաւորութիւնը, որի պատճառը նա է, որ ամենից լաւ է սիրել ինձն:

Քաղաքը փրկուած է. դա մեծ յաղթութիւն է, որ տարականայի թուլութիւնը միացած ծայրագոյն զոհարերութեան պատրաստակամութեան հետ Բայց դրաման դրանով չի վերջանում, և նոյն իսկ սկսում է այն ծանր մօմէնտից, երբ Մօննա-Վաննան Պրինչիվալլէի հետ Պիզայ է հասնում յայտնելու աշխարհին, Մարիօին, Գուիգօին, որ նա հայրենիքի փրկութիւնը ձեռք չի բերել իր պատուի գնով, թէ նա պարտական է այդ բոլորը Պրինչիվալլէի անկեղծ սիրուն և մեծահոգութեանը. Դրամայի այս մասը Մէտէոլինկ հասցրել է կլասիկական կատարելութեան: Ամբողջ լսում է այս անօրինակ յայտնութիւնը կուշտ մարդու սովորական մեղմ անտարբերութեամբ, նրա համար միևնոյն է, թէ Վաննան ինչ գնով է ձեռք բերել իր փրկութիւնը. նա չսորհակալ է, նա ցնծութեան ազազակներ է արձակում ի պատիւ իր ազատարարի, և երջանիկ է, որ ինքը կուշտ է, և չի մեռնի և իր էգօիզմը գոհացած է. Բայց Գուիգօն կայ, զոհուածը, անարգուածը, որ հաշիւ է պահանջում վիրաւորուած արուի կատաղութեամբ: «Ես արեցի ձեր ուղածը, նրա ուղածը, ամենքի ուղածը. ասում է նա, արդարութիւնը պահանջում է, որ իմ կամքն էլ վերջապէս կատարուի. ես լռեցի, ես թաք կացայ, ես չունչս պահեցի, ինչպէս կարող էր անել մի վախկոտ մարդ, երբ գողերը կողոպտում են

իր տունը... Գուր ինձ մանրակրկիտ վաճառական դարձրիք... Տեսէք, արշալոյսը բացուում է... Տեղիցս չեմ շարժուել մինչև այժմ... Ես չափում ու կշռում էի իմ խայտառակութիւնը... Պէտք էր ճշտիւ կատարել սակարկութեան պայմանները և վճարել ձեր ուտելիքների գինը... Այժմ ես արդէն ազատ եմ, այժմ կրկին ես եմ այստեղի իշխանաւորը և դուրս եմ գալիս իմ խայտառակութիւնից...

Կատաղած արուն շիթունքները կրծոտելով, մէկը մէկից դաժան մտքեր որոճալով հաշիւ է պահանջում, որովհետեւ նա համոզուած է, թէ իրան վիրատորել են. թէ իր պատիւը անարգուած է ամենամտոգորմ կերպով, թէ Պրինչիվալէն տիրացել է իր կնոջը, եւ միթէ ուրիշ կերպ կարող էր լինել, միթէ մարդկային ընթացիկ հասկացողութիւնը իր նմանի բարոյականութեան, հոգեկան առանձնայատկութիւնների մասին, որ իրն է նաև, կարող էր ուրիշ համոզմունք թելադրել Գուրի-գոին: Չէ որ Պրինչիվալէն նրա կնոջը մերկ էր պահանջել, էլ դրանից յետոյ ինչը կարող էր նրան ստիպել զսպել իր անասնական կիրքը, ինչպիսի մի թոյլ ու գեղեցիկ արարած, որն ունենայու համար նա նոյն իսկ դաւաճանում է իր երկրին:

Բայց վաննան ասում է, թէ իր պատիւն անարատ է մնացել, սա անհաւատալի է թւում Գուրիգոին, որ մի վիւրգեր հոգի է և այդ աստիճան բարձր, այդքան վսեմ ճշմարտութիւնը ըմբռնել չի կարողանում:

«Աստուած իմ, զուտ ճշմարտութիւնը, բացականչում է նա... ան, հապա ի՛նչ է իմ փնտոածը... Բայց չե՞ որ նւարտութիւնը պէտք է գեթ փոքր ինչ համապատասխան լինի մարդկային բնութեանը... ինչէր ես ասում»:

Մարդկային բնութեանը համապատասխան ճշմարտութիւն... դրանով լիքն է կեանքը, դա այն գարշահոտ ճահիճն է, ուր լողում են ամենատեսակ ժանդատեսիլ սողուններ. դա այն հեշտ, սովորական ճշմարտութիւնն է, որ բացատրում է, որի մօտիւնները լոյսի պէս պարզ են բանալ հոգիներին, և որի առաջ մարդկային գարշ բնութիւնը զգում է իրան բոլորովին ազատ, հանգիստ, ինչպէս իր տանը, իր սեփական յարկի տակ: Անշահախնդիր և բացարձակօրէն վսեմ վարմունք, ճշմարտութիւն, որի հիմունքները այս ցեխէ գնդի վրայ չեն, այլ մի ուրիշ, և թերային աշխարհում, դա անհասկանալի է, դա անընդունելի է, դա վեր է մարդկային բնութիւնից, դա յոգնեցնում է վիւրգեր հոգիները, որոնք երես են դարձնում այդ անօրինակ ճշմարտութիւնից և սիրով կուզէին տեսնել նրա տեղ ամենասանարգ կեղծիք: Կեղծիքի և ճշմարտութեան այդ պայքարի մէջ,

մեր գունատ կեանքում իդէալական, բացարձակ և ոչ յարաբերական ճշմարտութեան անկարելիութեան մէջ Մէտէոլինկ դրել է խորին և յուզիչ փիլիսոփայութիւն. «Պե՛տ է շարունակել սուք, ասում է ծերունի Մարկո, որովհետեւ չեն ուզում հաւատալ նեմաթութեանը»:

Եւ Վաննան շարունակում է սուտը մինչեւ վերջը, նա պնդում է, թէ ինքը խաբւում էր, թէ Պրինչիվալլէն իրան օրացել է: Գուբիոն, վեհմ ճշմարտութեան հանդէպ ըմբոստացած՝ թերահաւատ Գուբիոն, լսում է այս կեղծիքը հոգու կատարեալ անդորրութեամբ, չէ որ սա զուտ մարդկային է, չէ որ վեհմ ճշմարտութեան մեծ փայլին անսովոր հոգու աչքերն էլ ցաւով չեն խտտողւմ. սա բոլորովին մարդկային է, մահկանայու տրամաբանութեան պատշաճ, Պրինչիվալլէն տեսել է իր վրանում մենակ, գեղեցիկ, մերկ կին և օրհաստեղ նրան, սրանից էլ պարզ բան: Եւ Գուբիոն հանգիստ է. «Այժմ ա՛յն ինչ վերջացաւ, ասում է նա և ամեն ինչ մոռացութեան կը արուի արդար վրէժից յետոյ... Ծանր երազ էր, անցաւ գնաց...» Այս մեր ողորմելի կեանքում, նիւթապաշտ, տափակ հոգիների համար ճշմարտութիւնը միշտ երազ է, որ անցնում է, գնում, և նրա տեղ մնում է կեղծիքը, սուտը, խաբէութիւնը. որոնք կառավարում են աշխարհը, կեանքը, որոնցից հիւսուած է գարչելի իրականութիւնը:

Մօննա-Վաննայի համար էլ մի երազ կայ, որ անցնում է, բայց դա ճշմարտութիւնը չէ, այլ կեղծիքը, որ խոյս է տալիս նրա հոգուց, որի առաջ այս դէպքը բաց արեց աւելի լայն բարոյական հորիզոններ, որ իր անձնական գառն փորձութեան գնով կարողացաւ կշռել իդէալական գեղեցիկ սիրոյ խորութիւնը. նա կեղծեց սարսափելի տանջանքներով այդ սէրը, այդ ճշմարտութիւնը վրկկլու. «Հա՛, վատ երազ էր... Շուտով կը սկսուի լաւ երազը... Լաւ երազը...» Սա նրա նոր, վերածնուած կեանքն է, այդ լաւ երազը, որ նա կը վայելի Պրինչիվալլէի հետ, իրան իսկապէս սիրող անձի հետ:

Շատերի համար գուցէ տարօրինակ թուայ, որ Պրինչիվալլէն անկեղծ կերպով Մօննա-Վաննային սիրելով հանդերձ, նրան ենթարկում է այդ աստիճան վերաւորական փորձութեան, որպիսին է նրան համարեա մերկ իր վրանում տեսնելու պահանջը: Եւ ճշմարիտ, միթէ նա չէր կարող իր սիրած կնոջը պահանջել առանց այդ վերաւորական պայմանի: Առաջին հայեացքից կարելի է կարծել, թէ Մէտէոլինկ իր գրամայի այս կէտում մի հոգեբանական անճշտութիւն է թոյլ տուել, Բայց ա-

ւելի խորը դիտողութիւնը և հոգեբանական անալիզը պարզում է այս թիւրիմացութիւնը: Բանն այն է, որ Պրինչիվալլէն իր այդ պահանջը յայտնելիս գտնուում է հոգեկան մի բացատրիկ կացութեան մէջ. Ֆլօրենցիան, որին նա այսքան երկար ծառայել է արժանաւոր կերպով, որի համար իր արիւնն է տուել, չնորհիւ մատնութիւնների և քաղաքական հայեցակէտների, ամենասև աներախտագիտութեամբ այսօր վճռել է ոչնչացնել նրան: Պրինչիվալլէն էլ հաւատ չունի դէպի մարդկային առաքինութիւնը, դէպի բարոյականութիւնը, դէպի որն է զեղեցիկ բան, նա նմանում է այն մարդին, որ փոթորկուած ծովի վրայ մէկ մէկ ալիքների մէջ է նետում իր նաւակի մէջ եղած իրերը և վերջ ի վերջոյ փրկութեան յոյսը կտրած, պատրաստուում է նետուել անդունդների մէջ:

«Միթէ մտադիր էիր մինչև վերջը շահագործել մեր սարսափելի թշուառութիւնը», հարցնում է Վաննան Պրինչիվալլէին ակնարկելով այն մասին, թէ նա հաստատ վճռել էր տիրանալ իրան «Ախ, չը գիտեմ, պատասխանում է Պրինչիվալլէ, թէ ինչ էի մտադիր անել... Ես զգում էի, որ կորած եմ և ուզում էի ամեն ինչ ինձ հետ կորստի մատնել... Ես առում էի քեզ սիրոյս պլասեանով... Եւ իրօք, այդպէս կը վարուէի, եթէ այդ դու չը լինէիր... Բաւական էր մի հատիկ խօսք, որ տարբեր լինէր քո խօսքերից, բաւական էր մի ջնջին բան, որպէս զի բորբոքուէր ատելութիւնս և արձակուէր հրէշիս սանձը... Բայց քեզ տեսնելուն պէս՝ տեսայ և այն, որ այդ անհնար էր...» Պրինչիվալլէի այս խօսքերը կարծում ենք, բացատրում են իր տարօրինակ պահանջը՝ մերկ տեսնել Մօննա-Վաննային:

Այս երեք գլխաւոր տիպերից բացի, Մէտէոլինի գրուման ունի մի չորրորդ հետաքրքիր տիպ, դա ծերունի Մարկօն է, Գուելիօի հայրը, հին ստօիկ, որին երկար տարիների կեանքը, փորձութիւնները սովորեցրել են նայել աշխարհի իրերին փիլիսոփայի անյոյզ, խաղաղ աչքերով: Նա է, որ մղում է Վաննային յանձն առնել այն ծանր զոհարեցութիւնը: Նա է, որի սառն դատողութիւնները կազմում են, գուցէ, ըստ Մէտէոլինի բոլոր գործող անձանց արարքների փիլիսոփայութիւնը: «Այժմ, երբ քաղաքը փրկուած է արդէն, ասում է նա որդուն, մեզ էլ գրեթէ ցաւալի է թւում այդ փրկութիւնը, որ այնքան թանկ նստեց ձեզ և մենք էլ, կարելի է ասել, յակամայից խոնարհեցնում ենք մեր գլուխը այն մարդու ներկայութեամբ, որին միմիայն անիրաւարար վիճակուեց կրել ամբողջ ծանրութիւնը... Եւ սակայն եթէ մի հրաշքով երէկուան օրը նորից կրկնուէր, ես պարտաւոր կը լինէի վարուել այնպէս, ինչպէս երէկ վարուե

ցի, մասնացոյց անկ նոյն զոհերը, և դրդել գործելու նոյն ա-  
նարդարութիւնը, որովհետեւ արդար վարուել ուզողը ստիպուած է  
շարունակ, դառնացած սրտով ընտել երկու կամ երեք անհա-  
ւասար անարդարութիւններէից մէկը կամ միւսը...»

Այս փրիստօփայութեամբ կեանքը ըստ Մէտէոլինկի մի  
հրէշաւոր մարդակեր է և նրա հետ ճակատագրապէս կապուած  
են մանր ու մեծ զոհարերութիւնները Ազատութեան, հարիւր  
հազարների, միլիոնների ազատութեան կուռւմ ընկնում են  
այնքան երիտասարդ կեանքեր, խամրում են այնքան ծաղիկներ  
Սա մի բայարձակ, մի ողբալի անարդարութիւն է, այնքան  
մայրեր են սգում, այնքան անմեղ սրտեր փշրուած, բայց ամե-  
նասարդարասէր մարդն անգամ տանում է այդ մահերը, խաղաղ  
սրտով է տեսնում մայրերի ցաւը, լսում նրանց աղեկտուր հա-  
ռաչանքը, որովհետեւ այդ բոլորը կատարուած է մի մեծ, աւե-  
լի անողորմ անարդարութիւն, մի մեծ չարիք վերացնելու հա-  
մար, որպիսին է անպատիւ, ստորացուցիչ բռնութիւնը ծանրա-  
յած միլիոնների մէջքին և կեանքի ամենատխուր, ամենաանո-  
ղորմ փրիստօփայութիւնն է այս՝ լերկու կամ երեք անհաւասար  
անարդարութիւններից ընտրել մէկը կամ միւսը, սա նոյն-իսկ  
ճակատագրական է, անխուսափելի: Դեռ լաւ, որ մարդը կարո-  
ղանայ ընտրել փոքրագոյն անարդարութիւնը. տարաբաղաբար  
յաճախ հակառակ է լինում, որովհետեւ անհատական էգօիզմը  
մարդիկ միշտ գերադասում են բոլոր միւս գերագոյն հասարա-  
կան չահերից, անգամ մի այնպիսի մեծ, գաղափարական գոր-  
ծից, որպիսին է մի տառապող ժողովրդի ազատութիւնը անլուր  
բռնութեան լծի տակից: Մեծ չարիքը միշտ սնուած, ապրում է  
մանր էգօիզմներով:

Այժմ անցնում ենք դերակատարների խաղին:

Հէնց սկզբից պէտք է ասենք, որ մենք ինչքան որ յափըշ-  
տակուած էինք Մէտէոլինկի այս գեղարուեստական-փրիստօ-  
փայական երկով, նոյնքան թերահաւատութեամբ էինք վերա-  
բերուած դէպի նրա բնական յաջողութիւնը, ի նկատի ունե-  
նալով այն երկար և խորիմաստ դիալոգները, որոնք այնքան  
լաւ են կարդալու համար և այնքան դժուարատանելի, երբ բե-  
մից են լուռու: Ուրախ ենք ասել, որ մեր և ինչպէս և շատ  
չատերի այդ կանխակալ կարծիքը չ'արդարացաւ և հայ բե-  
մը այդ օրը Մօննա-Վաննայի խաղով մի քանի աստիճան  
բարձրացաւ վաստակած կատարեալ յաջողութեամբ:

Խմբի կազմին նայելով՝ դերերը բաժանուած էին աւելի  
քան յաջող Մօննա-Վաննայի դերը կատարեց տ. Մայսուրեան  
մի յաջողութեամբ, որ վեր էր բոլոր սպասածից: Երկրորդ գոր-

ծողութեան սկզբում, երբ վաննան յայտնուում է Պրինչիվալլէի վրանում կիսամերկ, որպէս ուխտուած և զողջօշուն զոհ մարդկային յաւի մեծ սեղանի վրայ, ա. Մայսուրեան կատարեց իսկական արտիստի պէս: Շատ խօսքեր չը կան այնտեղ, մի քանի բայտ, մի երկու կարծ, վճռական ֆրազ, բայց որքան խորը հոգեբանական դրութիւն, ինչ ցնցող, անդառնալի և վշտոտ վճռականութիւն: Եւ այդ վճռականութիւնը, այդ զողջօշուն մարմինը իբրև ողջակէզ բերող անողորմ հոգին հիանալի կերպով արտայայտեց վրանի դրան մօտ կծկուած կինը, որ այնպէս յիշեցնում էր վանդակի մէջ բռնուած գեղեցիկ թռչնակին, որ հաշտուած իր կայութեան հետ էլ փորձ չի անում ազատուել: Տ. Մայսուրեան երբեմն աւելի յաճախ է նայում գետին, քան, զուգէ, այդ հարկուոր է, սա նրա թերութիւններից մէկն է, և ոչ փոքրը, այս անգամ նրա այդ թերութիւնն էլ լրացրեց իր խաղի գրաստարիզը, նա շատ ի դէպ էր կռացնում պարանոցը կարծես չը տեսնելու համար նրան, որ իրան ենթարկել է այդ աստիճան ծանր անարգանքի: Այնուհետև հոգեբանական այն դժուար մօմենտները, երբ վաննայի սրտում աստիճանաբար փոփոխուում են յոյզերը, երբ նրա նողկանքն ու ատելութիւնը, կասկածն ու սարսափը կամայ կամաց տեղի են տալիս Պրինչիվալլէի վարմունքի փոփոխութեան ազդեցութեամբ, երբ սև ամպերով պատած նրա սիրտը բացւում կամայ կամայ ու պայծառանում, որպէս ժպտուն երկինք, ուր Պրինչիվալլէն տեսնում է մի շնչեղ մեծութիւն, մի տաճար և խոնարհուում է հեղութեամբ, այդ էլ յաջողուց ա. Մայսուրեանին: Բայց վերջին գործողութեան մէջ, երբ պէտք էր տանել այն ծանր փորձութիւնը և կեղծիք դնել ճշմարտութեան տեղ, ա. Մայսուրեան, ինչպէս ասում են, ինքն իրան գերազանցեց: Պէտք է ասել, որ դա բաւական երկար է տևում որպէս զի մարդ կարողանայ իր ներքին աշխարհը չը մատնել, չը թուլանալ, և սակայն համակրելի դերասանուհին, տարաւ այդ փորձութիւնն էլ և դժուար դերից զուրս եկաւ յայլմանակով: Համարձակ կարելի է ասել, որ տիկինը գեռ երբէք այդ աստիճան յաջողութեամբ չէր տարել դրամատիկ որեւէ դեր, դա մի բաղդաւոր զուգատիպութիւն է, Մօննա-վաննայի դերի պատշաճաւորութիւնը տիկնոջ տիմպերամենտին, չափազանցութիւն չի լինի ասել, որ այդ գերը ժամանակով նրա լուաւորոյն դերերից մէկը կը դառնայ:

Համեմատաբար ծանր դեր էր վիճակուած պ. Պետրոսեանին, ոչ թէ այն պատճառով որ Գոպիգօի դերը շատ աւելի հոգեբանական բարդութիւններ ունի, քան օրինակ Մօննա վան-

նայինը, այլ այն պատճառով, որ Մարկոսի, երկար և ոչ բեմական փիլիսոփայութիւնները լսելու ամենից շատ նա էր դատապարտուած: Գուրգոսի յանկարծական բռնկումները, խանդոտութեան կատաղի պոռթկումները, որոնք այլ պայմաններում ցընցող կը դառնային, չնորհիւ Մարկոսի փիլիսոփայութիւններէ՝ թուլանում, մեղմանում էին, որովհետեւ երկար ընդմիջումները նօսրացնում էին հոգեկան ազդու տպաւորութիւնների խտութիւնը: Այս անյարմարութիւնով հանդերձ պ. Պետրոսեան հիանալի տարաւ խանդոտ ամուսնու գերը և անհատի էգօրէմը յանձին նրա իր խելացի բացատրողն ունեցաւ: Կարծում ենք ճշմարտութիւնը ամբողջացրած կը լինենք եթէ ասենք, որ խանդոտ ամուսինը բաւականաչափ կատաղի և անընկճելի միջնադարեան ստպետ չէր:

Պ. Արէլեան յանձն էր առել Պրինչիփալէի գերը, գեղեցիկ ու պատշաճ դեր իր առնական հասակին, իր լայն շարժումներին: Տրիփուլչիօի հետ ունեցած միջնադէպը պ. Արէլեան տարաւ հիանալի կերպով. նա այն ժամանակ իսկական զինուորական էր, որ գիտէ գիմագրաւել մահը: Գեղեցիկ էր նաեւ նրա սպասողական միճակի անհանդատութիւնը և նրա առաջին հանդիպումը Մօննա-Վաննայի հետ, այն զգոյշ և դիտաւորեալ հարցեր տալու եղանակը: Բայց իր սիրոյ արտայայտութեան մէջ Գուրգոսի ասածի պէս «մարդկային բնութեան» յարմար ձեւեր առաւ, որոնց մէջ ցանկալի իդէալականը մի փոքր նուազեց. մէկ էլ վերջում Գուրգոսի հանդէպ իր բռնած դիրքը եթէ նուազ ըմբօստ ու խրոխտ լինէր, կարծում ենք խաղը դրանով չէր վնասուի: Այսպէս թէ այնպէս նրա խաղի ամբողջութիւնը այնպէս կատարեալ էր, այնպէս պատշաճ իր անպայման և բազմակողմանի տաղանդին: «Բազմակողմանի» բառը խիստ ի դէպ է պ. Արէլեանի համար, որի ուսերը սովորաբար չեն ծաւում յանձն առած դերերի բազմադասնութեան և ըմբօստական պարտաւորութիւնների տակ:

Պ. Յարութիւնեան ծերունի Մարկոսի դերում իր խաղով լրացրեց այդ լաւ երեկոյի տպաւորութեան ամբողջութիւնը: Ամենից անչնորքը այդ երեկոյ բեմի վրայ ամբօխ ներկայացնող բազմութիւնն էր մանեքնաների մի ժողով: